



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(56)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2021

**ՄԻՋՏԵՔՍԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ Զ. ՖԱՈՒԼԶԻ
«ԿՈԼԵԿՑԻՈՆԵՐԸ» ՎԵՊՈՒՄ**

ԱՆԱՀԻՏ ՄԱԿԱՐՅԱՆ

Հիմնաբաներ՝ միջտեքստայնություն, միջտեքստային տարրեր, միջտեքստային վերլուծություն, հեղինակի անհատական ոճ, հեղինակի մտադրություն

Սույն հոդվածի նպատակն է դիտարկել միջտեքստայնությունը՝ որպես տեքստաստեղծման կարևորագույն միջոցներից մեկը: Ուսումնասիրելով Զ. Ֆաուլզի «Կոլեկցիոները» վեպում և Վ. Շեքսպիրի «Փոթորիկ» պիեսում առկա միջտեքստային հարաբերությունները՝ նպատակ ունենք վեր հանել Ֆաուլզի անհատական ոճի յուրահատկությունները: Երկու գրական երկերի լեզվաճական, լեզվաբանաստեղծական ու միջտեքստային քննությունները թույլ են տալիս եզրակացնել, որ Զ. Ֆաուլզը, անդրադառնալով Շեքսպիրի պիեսին, իր վեպում արծարծում է «գեղեցիկի» և «տգեղի» գաղափարը՝ վարպետորեն միահյուսելով այն «ազատության» գաղափարի հետ: Անդրադարձ կատարելով Շեքսպիրի պիեսին, այնուամենայնիվ, Ֆաուլզը, զարգացնում է այն միտքը, որ ազատությամբ շնորհված մարդը, սահմանափակելով ուրիշի ազատությունը, զրկելով նրան ազատությունից, վերածվում է հրեշավոր մի անձնավորության: Հիրավի, նորաստեղծ տեքստը, իր մեջ կրելով միջտեքստային տարրեր, կարող է մեծ արժեք ներկայացնել միայն այն դեպքում, եթե վերջինս տարբերվում է անդրադարձվող տեքստից անհատական, հեղինակային մեկնաբանմամբ:

Յուրաքանչյուր ստեղծագործողի գեղարվեստական երկի արժեքը ամենից առաջ որոշվում է հեղինակի ոճի ինքնատիպությամբ, որն իր արտացոլումն է գտնում ստեղծագործության մեջ համապատասխան լեզվական միջոցների գործածմամբ: Ուշագրավ է, որ վերջին տասնամյակներում ժամանակակից լեզվաբանական ուսումնասիրությունները չեն սահմանափակվում գեղարվեստական ստեղծագործության սոսկ լեզվաճական միջոցների քննությամբ, այլև լեզվաբանության մեջ լայն կիրառություն է ստացել միջտեքստային

վերլուծությունը, որը հնարավորություն է ընձեռում առավել խորքային մակարդակում ուսումնասիրել հեղինակի անհատական ոճը:

Դիտարկելով միջտեքստայնությունը որպես տեքստաստեղծման կարևորագույն միջոցներից մեկը՝ սույն հոդվածում կփորձենք ուսումնասիրել գեղարվեստական ստեղծագործություններում առկա միջտեքստային հարաբերությունները՝ նպատակ ունենալով վեր հանել հեղինակի անհատական ոճի յուրահատկությունները:

Հայտնի է, որ միջտեքստայնության գաղափարը, այսինքն՝ տեքստերի միջև որոշակի կապերի առկայության հնարավորությունը լեզվաբանների ուշադրության կենտրոնում է եղել դեռևս վաղուց, մինչ «միջտեքստայնություն» եզրի օգտագործումը: Այնուամենայնիվ, «միջտեքստայնություն» եզրն առաջին անգամ օգտագործել է ֆրանսիացի լեզվաբան Յու. Կրիստևան 1967թ. լույս տեսած «Բախտին, բառ, երկխոսություն և վեպ» հոդվածում: Յու. Կրիստևան, հիմք ընդունելով Մ. Բախտինի երկխոսության տեսությունը, իր աշխատություններում զարգացնում է միջտեքստային հարաբերությունների գաղափարը: Վերլուծելով Մ. Բախտինի «բազմաձայնության» տեսությունը՝ նա առաջ է քաշում հետևյալ դրույթն այն մասին, որ ցանկացած տեքստ երկխոսության մեջ է այլ տեքստերի հետ և իր հերթին հիմք է հանդիսանում հետագա տեքստերի ձևավորման համար: Հարկ է նկատել, որ տեքստի այսպիսի հատկանիշն է, որ լեզվաբանն անվանում է միջտեքստայնություն (Кристева 2000):

Իր հերթին, ռուս լեզվաբան Ի. Սմիրնովը միջտեքստայնությունը դիտարկում է որպես տեքստաստեղծման գործընթաց՝ միջտեքստայնությունը սահմանելով որպես «տեքստի ներուժ, ինչը թույլ է տալիս ամբողջությամբ կամ մասնակիորեն ձևավորելու տեքստի իմաստը՝ այլ ստեղծագործություններից հղումներ կատարելու միջոցով» (Смирнов 1995: 11):

Այդ մասին է վկայում նաև Ն. Գուչինսկայայի դիտարկումը, ով պնդում է, որ միջտեքստայնությունը տեքստաստեղծման միջոց է: Լեզվաբանը փաստում է, որ «նոր տեքստերը ձևավորվում են արդեն իսկ հայտնի տեքստերից վերցված որոշակի միավորների միջոցով» (Гучинская 1993: 47):

Քննության առնելով վերոնշյալ լեզվաբանների առաջ քաշած հայեցակարգերը՝ մենք նույնպես հակված ենք այն տեսակետին, որ միջտեքստայնությունը ոչ միայն տեքստի ընկալման, այլև տեքստաստեղծման կարևորագույն միջոց է:

Ինչպես հայտնի է՝ «միջտեքստայնությունը ենթադրում է որևէ տեքստում այլ տեքստերից քաղված միավորների առկայություն, որն

արտահայտված է անդրադարձի, մեջբերումների և վերհուշի միջոցով» (Арнольд 2002: 71-72): Սակայն, հենց այստեղ է, որ արժևորվում և մեծ կարևորություն է ստանում հեղինակի անհատական ոճը, քանի որ նորաստեղծ տեքստն, իր մեջ կրելով միջտեքստային տարրեր, կարող է մեծ արժեք ներկայացնել միայն այն դեպքում, եթե վերջինս տարբերվում է նախորդող տեքստից անհատական, հեղինակային մեկնաբանմամբ: Այդ մասին է վկայում Ն. Ֆատենայի դրույթը միջտեքստայնության վերաբերյալ, որը վերջինս դիտարկում է որպես «այլ հեղինակների տեքստերի հետ հակադրության, զուգորդման և քողարկման հարաբերությունների բարդ համակարգի միջոցով սեփական տեքստի ծագման (ստեղծման) և սեփական բանաստեղծական «ես»-ի կանխադրման միջոց» (Фатеева 2007: 16-20):

Հարկ է նկատել, որ գեղարվեստական տեքստում միջտեքստային հարաբերությունների բացահայտման կարևոր մեթոդ է միջտեքստային վերլուծությունը: Ն. Բոլոտնովան առաջ է քաշում միջտեքստային վերլուծության հետևյալ փուլերը՝ ա) այլ հեղինակների ստեղծագործություններում հանդիպող հիմնական գաղափարների և լեզվական միջոցների վերհանումն ուսումնասիրվող տեքստում, բ) դրանց դասակարգումը, գ) անդրադարձվող և անդրադարձնող տեքստերի¹ միջև առկա փոխհարաբերությունների վերլուծություն, դ) վերհանված լեզվական միջոցների իմաստային զարգացման, փոփոխությունների քննություն ուսումնասիրվող տեքստում (Болотнова 2009: 472):

Հետևաբար, ճանաչողական-հաղորդակցական հարացույցի շրջանակներում միջտեքստային վերլուծությունը նկարագրվում է որպես տարբեր գեղարվեստական տեքստերում մտածական կառույցների առկայացման ուսումնասիրության միջոց, որը հարաբերվում է «աշխարհի հեղինակային պատկեր» հասկացողության հետ:

Միջտեքստային տարրերի քննության արդյունքում հեղինակի անհատական ոճի յուրահատկությունների վերհանման նպատակով ուսումնասիրել ենք Ջոն Ֆաուլզի «Կոլեկցիոները» վեպը, քանի որ վեպի առաջին իսկ էջերի ընթերցումը հնարավորություն է տալիս անդրադառնալու Վ. Շեքսպիրի «Փոթորիկ» պիեսի հայտնի կերպարներին: Ավելին, վեպի խորքային վերլուծության արդյունքները վկայում են, որ «Կոլեկցիոները» վեպում արժարժվող գլխավոր

¹ «Անդրադարձվող տեքստ» և «անդրադարձնող տեքստ» եզրույթները վերցված են Գ. Գիրուկյանի «Գրական անդրադարձի՝ որպես արտահայտչական հնարի մեկնողական ընդգրկումը» ատենախոսությունից, Երևան, 2005թ., էջ 115

թեմաներից մեկը՝ «ազատության» գաղափարը, առանցքային է նաև Շեքսպիրի «Փոթորիկ» պիեսում:

Հայտնի է, որ Ջ. Ֆաուլզը անգլիացի այն աշխարհահռչակ ստեղծագործողներից է, ով աչքի է ընկնում իր ինքնատիպ ոճով, աշխարհի յուրօրինակ ընկալմամբ և հարուստ լեզվաաշխարհով: Ֆաուլզի գրական հսկայական ժառանգությունը մշտապես մեկնաբանման նորանոր հնարավորություններ է տալիս՝ վկայելով հեղինակի ստեղծագործությունների գեղագիտական մեծ արժեքի մասին: Ստեղծագործությունների այդ բույլից է «Կոլեկցիոները» վեպը, որը գրվել է 1963 թվականին, սակայն մինչև այսօր լեզվաբանների և գրականագետների ուշադրության կենտրոնում է: Վեպն առանձնանում է այլ երկերից իր յուրահատուկ ոճով, որտեղ թե՛ ազատության գաղափարը, թե՛ մարդկային արժեքները ներկայացված են վեպի գլխավոր հերոսների մեկնաբանմամբ տարբեր տեսանկյուններից:

Ակնհայտ է, որ Ջ. Ֆաուլզը, ներշնչված լինելով Շեքսպիրի «Փոթորիկ» պիեսից, իր վեպի գլխավոր հերոսներին անվանակոչում է *Միրանդա* և *Քալիբան*, որտեղ նշված անունները հանդես են գալիս որպես անդրադարձ անուններ: «Կոլեկցիոները» վեպում գլխավոր հերոսուհու անունը Միրանդա է, իսկ նրան առևանգողինը՝ Ֆրեդերիկ Քլեգ, ով ինքն իրեն անվանում է Ֆերդինանդ (Շեքսպիրի «Փոթորիկ» պիեսում Միրանդան և Ֆրեդերիկը սիրահարներ են): Այնուամենայնիվ, Միրանդան, լինելով կիրթ և զարգացած, նախընտրում է Քլեգին Ֆերդինանդի փոխարեն անվանել Քալիբան՝ անդրադառնալով հենց «Փոթորիկ» պիեսին: Ստորև ներկայացված օրինակները, որոնք քաղված են «Կոլեկցիոները» վեպից հնարավորություն են տալիս ընթերցողին անդրադառնալու Շեքսպիրի հայտնի կերպարներին՝

“Ferdinand,” she said. “They should have called you Caliban.” (The Collector, p. 61)

Ներկայացված օրինակում անդրադարձ անուններ են ինչպես Ֆերդինանդը, այնպես էլ Քալիբանը: Հետաքրքրականն այն է, որ Ֆաուլզի «Կոլեկցիոները» վեպում այդ անունները պատկանում են միևնույն անձնավորությանը, մինչդեռ Շեքսպիրի պիեսում դրանք բնութագրում են տարբեր կերպարների: Շեքսպիրյան այս կերպարներից յուրաքանչյուրն իր ուրույն դերակատարությունն ունի պիեսում: Ֆերդինանդը ազնվատոհմիկ մի երիտասարդ է, մինչդեռ Քալիբանը մի հրեշավոր կերպար է, ով առանձնանում է իր տգիտությամբ և տգեղությամբ: Ուշագրավն այն է, որ Ֆաուլզը միևնույն կերպարի մեջ միավորել է այս երկու կենտրոնական հերոսներին՝ ընթերցողին ազատ մեկնաբանման հնարավորություն ընձեռելով: Այնուամենայնիվ,

նախագիտելիքով զինված ընթերցողը կկարողանա բացահայտել Ֆերդինանդի և Քալիբանի միջև հակադրությունը՝ ըստ նրանց վարքագծի, ապրելակերպի և պահվածքի:

Զուգահեռներ անցկացնելով «Կոլեկցիոները» վեպում Միրանդայի, Քալիբանի կերպարների և շեքսպիրյան հերոսների միջև՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ երկու երկերում էլ հեղինակները վեր են հանում «գեղեցիկի և սգեղի» հակադրությունը՝ կառուցելով իրենց խոսքը լեզվական և պատկերավորման տարբեր միջոցներով: Ներկայացնենք հետևյալ օրինակները՝

<p>Ferdinand <u>Admired Miranda!</u> <u>Indeed the top of admiration!</u> worth What's dearest to the world! O you, <u>So perfect and so peerless, are</u> <u>created</u> Of every creature's best! Act III, Scene I (<i>The Tempest</i>, p. 78)</p>	<p><i>Well, then there was the bit in the local paper about the scholarship she'd won and how clever she was, and her name as beautiful as herself, <u>Miranda</u>. P.10 (Collector)</i> <i>The truth was she <u>couldn't do ugly things</u>. She was <u>too beautiful</u>. (<i>The Collector</i>, p.64)</i></p>
--	---

Վ. Շեքսպիրի «Փոթորիկ» պիեսից և Զ. Ֆաուլզի «Կոլեկցիոները» վեպից քաղված հատվածներից հասկանալի է, որ Միրանդան երկու երկերում էլ բնութագրվում է որպես գեղեցկության, կանացիության, նրբագեղության մարմնավորում, ինչը Շեքսպիրն առկայացրել է պիեսում «*Admired Miranda! Indeed the top of admiration!*» օղակային կրկնության միջոցով, որտեղ «*admired*» և «*admiration*» նույնարմատ բառերի կրկնությամբ հեղինակը միտված է պատկերելու Միրանդայի գեղեցկությունն ու ինքնատիպությունը: Պատահական չէ «*admire*» բառի տարբեր բառակազմական ձևերի կիրառությունը, քանի որ Միրանդա անունը ծագում է լատիներեն «*mirandus*» բառից (<http://www.behindthename.com/name/miranda>), ինչը նշանակում է «*admirable, wonderful*», այսինքն՝ հիացմունք պարգևավոր: Ուշագրավ է նաև «*so perfect and so peerless*» արտահայտության վերլուծությունը, քանի որ «*so*» բառի կրկնությունը, ինչպես նաև «*s, p, r*» բաղաձայների կուտակման արդյունքում բաղաձայնոյթ ոճական հնարի կիրառությունը հավելյալ հուզարտահայտչականություն են հաղորդում հեղինակի խոսքին՝ ընթերցողին հնարավորություն ընձեռելով ավելի պատկերավոր կերպով ընկալելու հերոսուհու էությունը:

Զուգահեռներ անցկացնելով երկու երկերի միջև՝ ակնհայտ երևում է, որ երկու դեպքում էլ հեղինակները գովերգում են հերոսուհու

գեղեցկությունը: Առանձնակի հետաքրքրության է արժանի հատկապես «Կոլեկցիոները» վեպից դուրս բերված վերոնշյալ ասույթի ընդգրկված մասը միջտեքստային ծավալման մեջ՝ “*her name as beautiful as herself, Miranda*”, որտեղ նշված արտահայտությունը չնայած բառացի ճշգրտությամբ նույնը չէ, այնուամենայնիվ, Ֆաուլզը, անդրադարձ կատարելով Շեքսպիրին, նույնպես Միրանդայի գեղեցկությունը բնութագրելիս անդրադառնում է «Միրանդա» անվան ծագումնաբանությանը:

Հաջորդիվ ներկայացված օրինակում “*The truth was she (Miranda) couldn't do ugly things. She was too beautiful*” Ֆաուլզը “*ugly*” և “*beautiful*” բառերի հակադրության միջոցով ընդգծում է Միրանդայի գեղեցկությունը, անթերի պահվածքը: Պատահական չէ հեղինակի կողմից “*too*” մակբայի կիրառությունը, քանի որ վերջինս արտահայտում է Ֆրեդերիկի պատկերացումը Միրանդայի հանդեպ, ով կարծես թե տվյալ համատեքստում դրսևորվում է որպես Ֆերդինանդ՝ մեծագույն գնահատանքի արժանացնելով Միրանդայի թե՛ գեղեցկությունը և թե՛ բնավորության գծերը:

Ի հակադրություն Միրանդայի՝ Քալիբանը երկու երկերում էլ հեղինակների կողմից բնութագրվում է որպես հրեշավոր մի կերպար, ով կարծես տգիտության, անգթության մարմնավորում լինի: Ահա թե ինչ լեզվաոճական հնարներով են հեղինակները ներկայացնում Քալիբանի կերպարը՝

<p><i>A devil, a born devil, on whose nature Nurture can never stick; on whom my pains, Humanely taken, all, all lost, quite lost; And as with age his body uglier grows, So his mind cankers. Act IV, Scene I (The Tempest p. 113)</i></p>	<p><i>He (Caliban) is ugliness. But you can't smash human ugliness. (The Collector, p.130)</i></p>
---	--

Ակնհայտ է, որ Շեքսպիրը Քալիբանի հրեշավոր, սատանայական կերպարը բնութագրելու համար օգտագործում է “*devil*” բառը, ինչի կրկնությունը ասույթի սկզբում “*A devil, a born devil*” ավելի ուժգնացնում, ավելի արտահայտիչ է դարձնում հեղինակի խոսքը՝ ընթերցողի մոտ արթնացնելով Քալիբանի մասին պատկերացումները:

Հատկանշական է նաև Քալիբանի ֆաուլզյան նկարագրությունը, ինչը հնարավորություն է տալիս ընթերցողին անդրադառնալու Շեքսպիրի

հայտնի կերպարին: Վերլուծելով լեզվաոճական հնարները, որոնք երկու հեղինակները կիրառել են Քալիբանի կերպարը նկարագրելու համար՝ նկատում ենք, որ Ֆաուլզը, անդրադարձ կատարելով Շեքսպիրին, Քալիբանի տգիտությունը, տգեղությունն ու հրեշավոր կեցվածքը պատկերում է *“ugliness”* բառի միջոցով:

Չուգահեռ անցկացնելով *“on whom my pains, Humanely taken, all, all lost, quite lost”* և *“But you can’t smash human ugliness”* ասույթների միջև միջհամատեքստային հարթության վրա՝ հանգում ենք այն եզրակացության, որ երկու դեպքում էլ հեղինակները բնութագրում են Քալիբանի տգիտությունը: Ակնառու է, որ հեղինակների միտումը առկայացված է երկու ստեղծագործություններում տարբեր լեզվաոճական հնարների միջոցով: Եթե Շեքսպիրը խոսքին հավելյալ հուզական լիցք, հուզարտահայտչականություն ավելացնելու համար կառուցում է իր խոսքը՝ կիրառելով կրկնություն ոճական հնարը *“all, all lost, quite lost”*, ապա Ֆաուլզն օգտագործում է *“you can’t smash human ugliness”* փոխաբերությունը: Հատկանշական է, որ ներկայացված օրինակները անդրադարձի միջոցով արտահայտված անվանափոխության և համեմատության դեպքեր են, երբ այլ ստեղծագործությունից վերցրած կերպարների զուգադրման միջոցով հեղինակը պատկերում է իր հերոսներին:

Ուսումնասիրությունները վկայում են, որ երկու գեղարվեստական երկերում էլ «ազատություն» հասկացույթն առկայացվում է *“power”* բառի միջոցով, որը «ազատություն» հասկացույթի տեսականիշներից մեկն է: Ուշագրավն այն է, որ Շեքսպիրը *“power”*-ը ներկայացնում է որպես գերբնական ուժ, ինչը ընձեռում է ազատություն, իրավունք տնօրինելու մարդկանց ճակատագրերը: Միևնույն ժամանակ Ֆաուլզը զարգացնում է *“power”* բառի իմաստը՝ զուգորդելով այն փողի հետ, ինչը նույնպես տալիս է ազատություն, հնարավորություն թելադրելու սեփական կամքը մյուսներին:

Ներքոնշյալ հատվածում, որը քաղված է Շեքսպիրի «Փոթորիկ» պիեսից, ներկայացված է Միրանդայի խոսքը:

Miranda

Had I been any god of power, I would

Have sunk the sea within the earth or ere

It should the good ship so have swallow’d and

The fraughting souls within her. (Act I, Scene II) (The Tempest, p. 7)

Վերլուծելով մեջբերված հատվածի առաջին իսկ ասույթը՝ *“Had I been any god of power”* նկատում ենք, որ Միրանդան երազում է ձեռք բերել ազատություն, ինչն առկայացված է տվյալ համատեքստում բայի

ըղծական եղանակի կիրառությամբ, որն ավելի տպավորիչ է դառնում շրջուն շարահատության միջոցով: Հետաքրքրական է հատկապես “god of power” բառակապակցության գործածումը, ինչը ծառայում է հեղինակի միտումը բացահայտելուն, ըստ որի՝ հերոսուհին նույնպես ցանկանում է օժտված լինել գերբնական ուժով, որպեսզի ունենա ազատություն իրականացնելու իր ցանկությունները: Ակնառու է, որ Միրանդան դատապարտում է նրանց, ովքեր օգտագործում են իրենց ընձեռված ազատությունը չարիք գործելու նպատակով՝ մասնավորապես նշված համատեքստում փոթորիկ, նավաբեկություն առաջացնելու համար: Մինչդեռ հեղինակը արտահայտում է այն միտքը, որ ազատությունը կարելի է օգտագործել բարիք ծնելու, բարի գործեր իրականացնելու համար:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նաև “power” բառի ֆաուլցյան յուրովի մեկնաբանությունը, որտեղ վերջինս զուգորդվում է «ազատության» հետ:

*And I wouldn't have pretended even like that if I hadn't had all the time and money I wanted. In my opinion a lot of people who may seem happy now would do what I did or similar things if they had the money and the time. I mean, to give way to what they pretend now they shouldn't. Power corrupts, a teacher I had always said. And **Money is Power**. (The Collector, p. 24)*

Վերոնշյալ հատվածի լեզվաոճական քննությունը հնարավորություն է տալիս վեր հանել Ֆաուլզի մոտեցումը «փող» հասկացության, ինչը նա վարպետորեն տրամախաչում է «ազատություն» հասկացության հետ՝ վերջինս բառայնացնելով տվյալ համատեքստում “power” բառի միջոցով: Հատկանշական է “time and money”, ինչպես նաև “money and the time” բառակապակցությունների կրկնակի կիրառությունը նշված համատեքստում, որոնք, նույնպես կապակցված լինելով բայի ըղծական եղանակի հետ, ծառայում են հեղինակի միտումը բացահայտելուն, ըստ որի՝ փողը և ազատ ժամանակը անհատին շնորհում են ազատ ընտրության հնարավորություն: Պատահական չէ հեղինակի կողմից վերջին նախադասության կիրառությունը, քանի որ այդ ամբողջ հատվածում նկատում ենք վերընթաց աստիճանավորում, ինչը հանգուցալուծվում է “And money is power” ասույթով:

Երկու գրական երկերի թե՛ բովանդակային ուսումնասիրությունը և թե՛ լեզվաոճական ու միջտեքստային քննությունները թույլ են տալիս եզրակացնել, որ Զ. Ֆաուլզը, անդրադառնալով Շեքսպիրի պիեսին, իր վեպում արծարծում է «գեղեցիկի» և «պղծեղի» գաղափարը՝ վարպետորեն միահյուսելով այն «ազատության» գաղափարի հետ: Փաստորեն,

«Կոլեկցիոները» վեպի վերլուծությունը միջտեքստային ծավալման մեջ հնարավորություն է ընձեռում ապացուցելու այն տեսակետը, որ միջտեքստային տարրերի օգտագործումը իրապես տեքստաստեղծման ուրույն միջոց է: Այնուամենայնիվ, Ֆաուլզը, զարգացնում է այն միտքը, որ ազատությամբ շնորհված մարդը, սահմանափակելով ուրիշի ազատությունը, զրկելով նրան ազատությունից, վերածվում է հրեշավոր մի անձնավորության: Հիրավի, նորաստեղծ տեքստը, իր մեջ կրելով միջտեքստային տարրեր, կարող է մեծ արժեք ներկայացնել միայն այն դեպքում, եթե վերջինս տարբերվում է անդրադարձվող տեքստից անհատական, հեղինակային մեկնաբանմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Арнольд И. В., Стилистика. Современный английский язык: Учебник для вузов. Москва, Флинта, Наука, 2002, 384 стр.
2. Болотнова Н. С., Филологический анализ текста. Учеб. пособие. 4-е изд. М., Флинта, Наука, 2009, 520 стр.
3. Гучинская Н.О., Шпильманский эпос и проблема текстопорождения. Интертекстуальные связи в художественном тексте, Санкт-Петербург, Образование, 1993, 46-57 стр.
4. Кристева, Ю., Бахтин, слово, диалог и роман. Французская семиотика: От структурализма к постструктурализму / Пер. с франц., сост., вступ. ст. Г.К. Косикова, Москва, ИГ Прогресс, 2000, 427-457 стр. [<http://www.philology.ru/literature1/kristeva-00.htm>]
5. Смирнов И. П., Порождение интертекста (элементы интертекстуального анализа с примерами из творчества Б. Л. Пастернака), Изд-во СПбГУ, 1995, 193 стр.
6. Фатеева Н. А., Интертекст в мире текстов. Контрапункт интертекстуальности. Изд. 3-е, стереотипное. М., КомКнига, 2007, 280 стр.
7. Fowles J., The Collector, London, 1963.
8. Shakespeare W., The Tempest [sparks.eserver.org/books/shakespeare-tempest.pdf]

REFERENCES

1. Arnol'd I. V., Stilistika. Sovremennyj anglijskij jazyk: U4ebnik dlja vuzov. Moskva: Flinta: Nauka, 2002, 384 str.

2. Bolotnova N. S., Filologičeskij analiz teksta. Učeb. posobie. 4-e izd. Moskva: Flinta: Nauka, 2009, 520 str.
3. Gučinskaja N.O., 66pil'manskij jepos i problema tekstoporo#denija. Intertekstual'nye svjazi v hudo#estvennom tekste. Sankt-Peterburg: Obrazovanie, 1993, 46-57 str.
4. Kristeva, Ju., Bahtin, slovo, dialog i roman. Francuzskaja semiotika: Ot strukturalizma k poststrukturalizmu / Per. s franc., sost., vstup. st. G.K. Kosikova. - Moskva: IG Progress, 2000, 427-457 str. [<http://www.philology.ru/literature1/kristeva-00.htm>]
5. Smirnov I. P., Poro#denie interteksta (jelementy intertekstual'nogo analiza s primerami iz tvorčestva B. L. Pasternaka) Sankt-Peterburg: Izdvo SPbGU, 1995, 193 str.
6. Fateeva N. A., Intertekst v mire tekstov. Kontrapunkt intertekstual'nosti. Izd. 3-e, stereotipnoe. Moskva: KomKniga, 2007, 280 str.

АНАИТ МАКАРЯН - АНАЛИЗ ИНТЕРТЕКСТУАЛЬНЫХ РЕПРЕЗЕНТАНТОВ НА МАТЕРИАЛЕ РОМАНА ДЖ. ФАУЛЗА “КОЛЛЕКЦИОНЕР”

Ключевые слова: интертекстуальность, интертекстуальные репрезентанты, интертекстуальный анализ, идиостиль, интенция автора

Данная статья посвящена изучению интертекстуальности, которая имеет важнейшую текстоформирующую функцию. Интертекстуальный анализ романа Дж. Фаулза "Коллекционер" и пьесы Шекспира "Буря" способствует выявлению особенностей идиостиля Фаулза. Лингвопоэтический, лингвостилистический и межтекстуальный анализ двух литературных произведений показывает аллюзивный характер романа "Коллекционер", в котором шекспировские понятия "красоты" и "уродства" ассоциируются с концептом "свободы", отражая индивидуальное восприятие мира Фаулза. Итак, данный анализ позволяет сделать вывод, что новообразованный текст, сформированный интертекстуальными репрезентантами, представляет ценность, если этот текст отражает мировоззрение и интенции автора.

ANAHIT MAKARYAN - STUDY OF INTERTEXTUAL MARKERS OF THE NOVEL “THE COLLECTOR” BY J. FOWLES

Keywords: intertextuality, intertextual markers, intertextual analysis, individual style, author's intention

The present paper aims at studying intertextuality as one of the basic means of structuring a text. Intertextual analysis of the novel “The Collector”

by J. Fowles and the play “The Tempest” by W.Shakespeare make it possible to disclose the peculiarities of Fowles’ individual style. Linguopoetic, linguostylistic and intertextual analysis of the two literary works reveals the allusive character of the novel “the Collector”, where the Shakespearean concepts of “beauty” and “ugliness” are associated with the concept “freedom”, highlighting Fowles’ individual perception of the world. Hence, the given study has yielded the conclusion that the allusive text containing intertextual markers can present value if only this text reflects the worldview and the intentions of the author.

Ներկայացվել է՝ 02.02.2021
Գրախոսվել է՝ 02.02.2021